



Արձանագրություն Ռեստորանների համար. Հավելված I

Վերջին փոփոխություններ (փոփոխությունները նշված են դեղինով)

8/11/20. Պարզաբանվել է, որ գուգարանները, որոնք հասանելի էին հաճախորդների համար, պետք է շարունակեն հասանելի լինել:

Նոր Կորոնավիրուսի (COVID-19) շարունակական արագ տարածման պատճառով և մեր համայնքի ամենախոցելի անդամների պաշտպանության անհրաժեշտության համար այս արձանագրությունը թարմացվել է Նահանգի Հանրային Առողջապահության Պատասխանատուի Հրամանին համապատասխան՝ սահմանափակելու ռեստորանները և սննդի հաստատությունները, որոնք պատրաստում և մատուցում են սնունդը բացօթյա տարածքներում, իրականացնում են առաքման, մեքենայով մոտենալ վերցնելու կամ միայն վերցնել- տանելու ծառայություններ: Ռեստորանների կամ այլ սննդի հաստատությունների ներսում ճաշել չի թույլատրվում:

Ի հավելումն Նահանգի Հանրային Առողջապահության Պատասխանատուի կողմից ռեստորաններին ներկայացված պահանջների՝ ռեստորանները պետք է համապատասխանեն նաև աշխատողների անվտանգության և վարակի վերահսկման արձանագրություններին նույնպես:

Բացառությամբ ստորև նշվածների, գարեջրատները, բարերը, գարեջրագործները, գինու համտեման սրահները և ալկոհոլ թորող հաստատությունները պետք է փակ մնան՝ տեղում խմիչքի և սննդամթերքի սպառման համար, մինչև Հանրային Առողջապահության Պատասխանատուի կողմից թույլատրվի դրանց փոփոխված կամ լիարժեք վերաբացումը: Գարեջրատներին, բարերին, գարեջրագործներին, գինու համտեման սրահներին արգելվում է սննդի կապալառուի հետ համագործակցելը՝ գործունեությունը վերսկսելու նպատակով: Գարեջրատներին, գարեջրագործներին, համտեմի սրահներին և ալկոհոլ թորող հաստատություններին թույլատրվում է մանրածախ առևտուրը և արտադրությունը և դրանք պետք է հետևեն համապատասխան արձանագրությունների պահանջներին:

Միջին և բարձր ռիսկայնության ռեստորանները, բարերը կամ գարեջրատները, որոնք ունեն Հանրային Առողջապահության թույլտվություն, կարող են շարունակել առաջարկել բացօթյա նստել ճաշելու տարբերակը, երբ սնունդը պատրաստվում է տեղում, ինչպես թույլատրվում է Հանրային Առողջապահության Պատասխանատուի հրամանով և բավարարելով այս Արձանագրության պահանջները: Բար-սեղանները պետք է փակ մնան: Ռեստորանները և սննդի մնացած հաստատությունները հնարավորին չափով պետք է շարունակեն առաջարկել և խրախուսել սննդի պատվիրումը տեղում վերցնելու և առաքման համար:

Այս արձանագրությունը նախատեսված չէ համերգների, ներկայացումների կամ զվարճանքի վայրերի համար, որոնք ներսում ունեն սննդի կետեր: Այս սննդի կետերը կմնան փակ, մինչև հատուկ հրամանով վերջիններիս կթույլատրվի վերսկսել փոփոխված կամ լիարժեք ընթացքով իրենց աշխատանքները:

Խնդրում ենք նկատի ունենալ, այս փաստաթուղթը կարող է թարմացվել կախված լրացուցիչ տեղեկությունների և աղբյուրների հասանելիությունից, ուստի կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելես

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՇՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ



Շրջանի կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/> այս փաստաթղթի թարմացումներին հետևելու համար:

Այս ստուգաթերթը ներառում է՝

- (1) Աշխատավայրի քաղաքականությունն և գործելակերպերը՝ ուղղված աշխատակիցների առողջության պահպանմանը:
- (2) Ֆիզիկական հեռավորության ապահովման միջոցառումներ:
- (3) Վարակի վերահսկումն ապահովող միջոցառումներ:
- (4) Աշխատակիցների և հասարակության միջև հաղորդակցությունը:
- (5) Կարևոր ծառայություններին անաչառ հասանելիության միջոցառումներ:

Դուք պետք է անդրադառնաք այս հինգ հիմնական ոլորտներին, երբ ձեր հաստատությունը սկսի մշակել վերաբացման արձանագրությունները:

Այս ուղեցույցում ընդգրկված բոլոր ռեստորանները պետք է իրականացնեն ստորև նշված բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ չիրականացված միջոցառում կիրառելի չէ բիզնեսի համար :

Հաստատության անունը.

Հաստատության հասցեն.

Անցյալում թույլատրված առավելագույն հաճախորդների քանակը.

Տեղադրման ամսաթիվը.

A. ԱՇԽԱՏԱՎԱՅՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՈՒ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԸ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ (ՆՇԵՔ ԱՅՆ ԲՈԼՈՐԸ, ՈՐՈՆՔ ԿԻՐԱՌԵԼԻ ԵՆ ՁԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

- Բոլոր նրանց, ովքեր կարող են իրենց աշխատանքը կատարել տանից, ապա պետք է հանձնարարվի շարունակել այդպես անել:
- Խոցելի աշխատակիցներին (65-ից բարձր տարիքի, հղիներին և քրոնիկական հիվանդություններ ունեցողներին) հնարավորության դեպքում հանձնարարել այնպիսի աշխատանք, որը հնարավոր է կատարել տնից և պետք է քննարկել բոլոր մտահոգությունները նրանց բուժաշխատողի կամ մասնագիտական առողջապահական ծառայության հետ, որոշումներ կայացնելու համար նրանց աշխատատեղի վերադառնալու հնարավորության մասին:



- ❑ Բոլոր աշխատակիցներին տեղեկացնել աշխատանքի չներկայանալ, եթե հիվանդ են կամ շփվել են COVID-19-ով հիվանդ անձի հետ:
- ❑ Աշխատակիցներին տրամադրել տեղեկատվություն գործատուի կամ կառավարության կողմից հովանավորվող արձակուրդի նպաստների վերաբերյալ, որը աշխատողը իրավունք կունենա ստանալ, ինչն էլ ֆինանսապես ավելի հեշտ կդարձնի նրա տանը մնալը: Տե՛ս [հիվանդության հիմքով աշխատողին տրամադրվող արձակուրդի և COVID-19-ի համար աշխատողների փոխհատուցման կառավարության աջակցման ծրագրերի](#) ներառյալ աշխատողների կողմից հիվանդության հիմքով արձակուրդ ստանալու իրավունքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններն անմիջապես [Ընտանիքների Կորոնավիրուսին Առաջին Արձագանքի Օրենքի](#) ներքո, և աշխատակիցների համար աշխատողների փոխհատուցման վճարներ ստանալու իրավասության և Մարտի 19-ից Հուլիսի 5-ի միջակայքում COVID-19-ով վարկման դեպքերին առնչվող աշխատանքների մասին տեղեկությունները [Նահանգապետի N-62-20 Գործադիր Կարգի ներքո](#):
- ❑ Եթե տեղեկանում եք, որ մեկ կամ ավելի աշխատակիցներ դրական են թեստավորվել կամ COVID-19-ին համապատասխան ախտանիշներ ունեն, ապա գործատուի մշակած ծրագրի կամ արձանագրության համապատասխան այդ անձը (անձիք) պետք է տանը մեկուսանա, և պահանջել անհապաղ ինքնամեկուսացում բոլոր այն աշխատակիցներից, ովքեր աշխատավայրում շփվել են այդ անձի(անձանց) հետ: Գործատուն պետք նախատեսի արձանագրություն կարանտինում գտնվող բոլոր աշխատակիցներին հնարավորություն տալու COVID-19 թեստավորելու վերաբերյալ, որպեսզի պարզ դառնա թե արդյոք եղել են աշխատավայրում այլ վարակվածներ, որը կպահանջի COVID-19-ի վերահսկման լրացուցիչ միջոցառումներ:
- ❑ Եթե աշխատավայրում 14 օրվա ընթացքում երեք (3) կամ ավելի դեպքեր են բացահայտվել, ապա, գործատուն պետք է զեկուցի այս բռնկումը Հանրային Առողջապահության Վարչությանը՝ (888) 397-3993 կամ (213) 240-7821 հեռախոսահամարով: Եթե աշխատավայրում վարակված խումբ է հայտնաբերվել, Հանրային Առողջապահության Վարչությունը խմբի նկատմամբ արձագանք կնախաձեռնի, որը ներառում է՝ վարակի վերահսկման ցուցումների և խորհուրդների տրամադրում, մասնագիտական օժանդակություն և հաստատության համար առանձնահատուկ վերահսկման միջոցառումներ: Կնշանակվի խմբի հետագոտման գործի ղեկավար՝ օգնելու ուղղորդել հաստատության արձագանքը:
- ❑ Իրականացվում է [աշխատակիցների ստուգումներ](#)՝ նախքան աշխատակիցներին կթույլատրվի աշխատավայր մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցքի դիտարկում, ինչպես նաև հարցում, թե արդյոք աշխատակիցը նախորդ 14 օրվա ընթացքում շփվել է COVID-19-ով վարակված մարդու հետ: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար կարգով կամ անհատապես՝ աշխատակցի ժամանելուն պես: Հնարավորության դեպքում աշխատավայրում պետք է կատարվի ջերմաչափում:
- ❑ Այն աշխատակիցներին, ովքեր շփվում են ուրիշների հետ, անվճար տրամադրվում է դեմքի ծածկոց, որը ծածկում է քիթը և բերանը: Աշխատակիցը պետք է մշտապես կրի դիմակը ողջ աշխատանքային օրվա ընթացքում՝ այլ անձանց հետ շփվելու կամ շփման հավանականության պարագայում: Աշխատակիցները, ում բուժաշխատողները հանձնարարել են չկրել դեմքի ծածկոցներ, պետք է կրեն ներքև եզրին շղարշ ունեցող դեմքի վահաններ, որպեսզի համապատասխանեն Նահանգային պահանջների պայմաններին, եթե միայն նրանց վիճակը դա թույլ է տալիս: Նախընտրելի են այն տեսակի շղարշները, որոնք մարմնի ձևն են ստանում կզակի տակ: Միակողմանի փականներ ունեցող դիմակները չպետք է օգտագործվեն: Աշխատակիցները կարիք չունեն դեմքի ծածկոցներ կրել, երբ մենակ են անձնական գրասենյակում կամ պինդ



միջնապատերով առանձնացված աշխատախցում, որի միջնապատերի բարձրությունը գերազանցում է աշխատակցի հասակը կանգնած ժամանակ:

- Աշխատակիցներին տեղեկացնել և հանձնարարել կտորե դիմակները ճիշտ ձևով օգտագործելու վերաբերյալ, ներառյալ դիմակները ամեն օր լվանալու անհրաժեշտությունը:
- Դեմքի վահանները տրամադրվում են մատուցող անձնակազմին և այն աշխատակիցներին որոնք սպասարկում են հաճախորդներին, ովքեր չեն կրում դիմակներ ուտելու և խմելու ընթացքում: Դեմքի վահանը պետք է կրել ի հավելում կտորե դիմակին: Կտորե դիմակները պաշտպանում են մյուսների դիմակը կրողի կաթիլներից; դեմքի վահանները օգնում են պաշտպանել կրողին մյուսների կաթիլներից:
- Դեմքի վահանները պետք է օգտագործվեն, մաքրվեն և ախտահանվեն համաձայն արտադրողի ցուցումունքների:
- Աշխատակիցներին հանձնարարված է հետևել ձեռքերի հիգիենային, ներառյալ ձեռքերի հաճախակի լվանալը, ձեռքերի ախտահանիչ միջոցի կիրառումը և ձեռնոցների օգտագործումը:
- Աշխատողներին լրացուցիչ ժամանակ է տրամադրվել ձեռքերը հաճախակի լվանալու համար:
- Աշխատակիցներին հիշեցվում է հազալիս և փռշտալիս քիթն ու բերանը անձեռոցիկով ծածկել: Օգտագործված անձեռոցիկը պետք է աղբի մեջ նետել և անմիջապես ձեռքերը լվանալ օձառով և տաք ջրով առնվազն 20 վայրկյան:
- Աշխատակիցներին արգելվում է սննդի հաստատության ցանկացած վայրում ուտել կամ խմել, բացի նախատեսված ընդմիջման սենյակներից:
- Բոլոր աշխատակիցներին, վաճառողներին և առաքում իրականացնող անձնակազմին հրահանգներ են տրված ֆիզիկական հեռավորություն պահպանելու և կտորե դիմակներ կրելու վերաբերյալ, երբ գտնվում են ուրիշների շրջապատում:
- Ընդմիջումները փոփոխվում են աշխատավարձի և ժամերի կանոնակարգի պահանջների համաձայն, որպեսզի պահպանվի աշխատակիցների միջև հնարավոր վեց (6) ոտնաչափ հեռավորությունը ընդմիջման սենյակներում: :
- Ընդմիջման սենյակները, պետքարաններն ու այլ ընդհանուր վայրերը հաճախակի ախտահանվում են հետևյալ ժամանակացույցով.

- Ընդմիջման սենյակներ _____
- Պետքարաններ _____
- Այլ վայրեր _____

Ախտահանող և այլ հարակից նյութերը աշխատակիցներին հասանելի են հետևյալ վայր(եր)ում՝ _____

COVID-19-ի դեմ արդյունավետ ձեռքերի ախտահանման միջոցը հասանելի է բոլոր աշխատակիցներին հետևյալ վայր(եր)ում՝ _____

Այս արձանագրության պատճեն տրամադրվել է բոլոր աշխատակիցներին :



Լրացուցիչ (ընտրովի)- Նկարագրել այլ միջոցառումներ՝

B. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Եթե հնարավոր է կտորե դիմակ կրող որևէ աշխատակցի հանձնարարեք կանգնել դռան մոտ, ամենամոտ այցելուից առնվազն 6 ոտնաչափ հեռավորության վրա, որպեսզի հետևի ֆիզիկական հեռավորության պահպանմանը:
- Ֆիզիկական հեռավորություն ապահովելու միջոցառումներին հետևել այն վայրում, որտեղ հաճախորդները կամ աշխատակիցները միևնույն հերթի մեջ են: Սա ներառում է դրամարկղերը և վճարման կենտրոնները, ուտեստների սեղանները և հերթերը, պետքարանները, վերելակների միջանցքները, ընդունող կայանները և սպասասրահները, ավտոմեքենաները կանգնեցնելու հատուկ ծառայությունները և ցանկացած այլ վայրեր, որտեղ հաճախորդները կարող են կուտակվել:
 - Ժապավենի կամ այլ գծանշանների միջոցով 6-ոտնաչափ հեռավորություն տեղադրել ցանկացած վայրերում, որտեղ հասարակության անդամները կարող են շարք կազմել կամ կանգնել:
 - Հնարավորության դեպքում քայլողների համար ստեղծել ուղղեցույց միջանցքներ, որպեսզի սահմանափակեք աշխատակիցների և հաճախորդների միմյանց կողքով անցնելը:
- Սննդի հաստատությունները, որոնք առաջարկում են սնունդը վերցնելու տարբերակներ կամ առաքում, պետք է ապահովեն, որ ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջները կիրառվեն այն հաճախորդների համար, ովքեր հերթ են կանգնում սնունդը պատվիրելու կամ վերցնելու ժամանակ:
- Հաստատության վայրում բացօթյա նստելու տարբերակի դեպքում տարբեր սեղանների շուրջ նստած հաճախորդների միջև պետք է պահպանվեն 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորության պահանջները
 - Բար-սեղանները, որոնք օգտագործվում են ալկոհոլային խմիչքների պատրաստման և մատուցման համար, պետք է փակ լինեն սեղանի մոտ սննդի և խմիչքի մատուցման ծառայությունների համար
 - Տեղում՝ սննդի հաստատության տարածքի ներսում, նստել չի թույլատրվում
 - Ժամանցային գործունեությունն արգելավում է: Սա ներառում է, բայց սահմանափակված չէ, Disk Jockey և կենդանի երաժշտական և ժամանացային միջոցառումներ:
 - Ռեստորանները չեն կարող կազմակերպել ընդունելություններ, ճաշկերույթներ և այլ մեծ հավաքույթներ:
- Հնարավորության դեպքում ընդլայնեք բացօթյա նստատեղերը համաձայն տեղական պլանավորման և գոտիավորման օրենքների:
- Հնարավոր դեպքերում մարդկանց միջև անմիջական շփումը նվազեցնելու համար տեխնոլոգիական լուծումներ կիրառեք. բջջային հեռախոսով պատվեր տեղադրեք, նստատեղի համար մինչ ժամանելը հաղորդագրություն ուղարկեք, առանց հավելու վճարման տարբերակներ կիրառեք:
- Նախագծեք փոխգործակցությունը հաճախորդների, առաքման վարորդների և աշխատողների միջև



այնպես, որպեսզի պահպանեք ֆիզիկական հեռավորությունը:

- Ռեստորանի ներսի և դրսի տարածքներում, որտեղ հաճախորդները, առաքիչ վարորդները կամ այլոք կարող են սպասել սննդին, նշումներ արեք հատակին հնարավորություն տալու և պարտադրելու համար ֆիզիկական հեռավորության պահպանումը:
 - Հնարավորինս իրականացնել ուտելիքը վերցնելու և առաքման ժամանակ առանց հպվելու գործընթացներ և այցելուների հետ փոխգործակցման այլ էլեկտրոնային համակարգերի կիրառումը:
 - Հնարավորության դեպքերում, մատուցողների կամ այլ աշխատակիցների և հաճախորդների միջև շփումը յուրաքանչյուր անգամ առավելագույնը կարող է լինել միայն հինգ րոպե:
- Հաճախորդներին զգուշացրեք, հնարավորության դեպքում տեղում՝ բացօթյա ճաշելու համար ամրագրագրեն իրենց սեղանը, կամ նախապես զանգահարեն ճշտելու համար հաստատության բացօթյա տարածքում նստելու/սպասարկելու կարողությունը: Յուրաքանչյուր խմբի համար հաճախորդների տվյալները պետք է գրանցվեն, եթե դա կիրառելի է նորմալ աշխատանքային գործունեության շրջանակներում, կամ ամրագրման պահին կամ տեղում, որպեսզի անհրաժեշտության դեպքում հասանելի լինի:
- Կարող եք կիրառել հեռախոսով ամրագրման համակարգը, որը թույլ է տալիս մարդկանց հերթ կանգնել կամ սպասել մեքենաների մեջ և ներս մտնել միայն հեռախոսագանգ, հաղորդագրություն կամ այլ կարգի կանչ ստանալու դեպքում, որը կտեղեկացնի նրանց իրենց սեղանը պատրաստ լինելու մասին:
- Եթե հաստատությունը կարողություն ունի և ընտրում է պատվերները տեղում ընդունելը, ապա անհրաժեշտ է հաճախորդներին առաջարկել ճաշացուցակ (փակցված կամ մեկանգամյա օգտագործման) հեշտացնելու համար պատվերի ընդունումը, և փաթեթավորված պատվերը հաճախորդը պետք է վերցնի որքան հնարավոր է արագ. անհրաժեշտ է նաև հաճախորդներին տեղեկացնել պատվերը ստանալու մոտավոր ժամը: Իրենց պատվերին սպասող հաճախորդները չպետք է հավաքվեն հաստատության ներսում: Նրանք պետք է մնան ավտոմեքենայի մեջ, կամ պետք է վերադառնան համապատասխան ժամին իրենց պատվերը ստանալու համար:
- Սահմանափակեք բացօթյա տարածքում մեկ սեղանի շուրջ նստող հյուրերի քանակը: Միևնույն խմբի մարդիկ, որոնք նստած են նույն սեղանի շուրջ, կարիք չունեն 6 ոտնաչափ հեռու լինելու միմյանցից: Խմբի բոլոր անդամները պետք է ներկա լինեն մինչև նստելը և հյուրընկալը պետք է խմբի անդամներին մեկ անգամից բերի սեղանի մոտ:
- Նույն սեղանի շուրջ բացօթյա տարածքում նստած և միևնույն միջոցառմանը մասնակցող հյուրերի քանակը չի կարող գերազանցել 6 մարդուց :
- Սահմանափակել շփումը մատուցող անձնակազմի և հաճախորդների միջև:
- Տեղադրեք ֆիզիկական պատնեշներ, ինչպիսիք են՝ միջնապատերը կամ օրգանական ապակուց պատնեշները, դրամարկղերի մոտ, հյուրընկալի կանգնելու հատվածում, պատվերները ընդունելու սեղանների մոտ և այլ մասերում, որտեղ 6 ոտնաչափ ֆիզիկական հեռավորություն պահպանելը դժվար է:
 - Սահմանափակեք առանձին խմբերին սպասարկող աշխատակիցների թիվը:
- Թույլ մի տվեք աշխատակիցների և հաճախորդների կուտակումը անցուդարձով լեցուն հատվածներում, օրինակ՝ պետքարաններում, միջանցքներում, բարի տարածքում, ամրագրման և քարտով վճարման վայրերում, և այլ:
- Պահանջեք աշխատակիցներից խուսափել ձեռքսեղմումներից և նմանատիպ ողջույններից,



որոնք խախտում են ֆիզիկական հեռավորության պահպանումը:

- ❑ Օգտագործեք պատնեշներ կամ մեծացրեք սեղանների/աթոռների միջև հեռավորությունը աշխատակիցների ընդմիջման սենյակներում նրանց առանձնացնելու նպատակով:
Հնարավորության դեպքում ստվերային ծածկերով և նստարաններով ընդմիջման բացօդային տարածքներ ստեղծեք, ապահովելու համար ֆիզիկական հեռավորությանը :
- ❑ Հնարավորության դեպքում վերադասավորել աշխատանքի ընթացքը աշխատողների միջև ֆիզիկական հեռավորությունը պահպանելու համար:
 - Խոհանոցի և հաստատության ներքին հատակների վրա նշումներ արեք ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջներն ամրապնդելու համար:
- ❑ Ֆիզիկական հեռավորության վերաբերյալ արձանագրությունները պետք է օգտագործվեն ցանկացած զրասենյակային տարածքներում, խոհանոցներում, պահեստավորման սենյակներում, սառնարան-սենյակներում, և այլ աշխատակիցներով խիտ և անցուղարձով լի տարածքներում:
 - Ակնկալվում են պատահական շփումները, սակայն անհրաժեշտ է այն սահմանափակել առավելագույնը մինչև 15 րոպե, բայց ցանկալի է 10 րոպե, և աշխատակիցները պետք է մշտապես կրեն իրենց կտորե դիմակները:

C. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ՄԻՆՉԵՎ ԲԱՑՎԵԼԸ

- ❑ Համոզվեք հաստատության HVAC (օդափոխիչ) համակարգը աշխատանքային լավ վիճակում է, և հնարավորության դեպքում օդափոխությունը ավելացնել առավելագույն չափով.
 - Կարող եք տեղադրել շարժական բարձր արդյունավետության օդամղիչներ, փոխարինել շենքի օդամղիչների ֆիլտրերը ավելի բարձր արդյունավետության ֆիլտրներով, և կատարել այլ փոփոխություններ աշխատանքային բոլոր տարածքներում արտաքին օդի և օդափոխության քանակն ավելացնելու համար:
- ❑ Այն հաստատությունները, որոնք երկար ժամանակ չեն շահագործվել, խորհուրդ է տրվում վերաբացելուց առաջ առնվազն հինգ րոպե բաց թողել տաք և սառը ջրի փականները՝ հաստատության ջրամատակարարման համակարգում հավաքված հին ջուրը նորով փոխարինելու համար:
- ❑ Հաստատությունը մանրակրկիտ մաքրել և ախտահանել օգտագործելով COVID-19-ի դեմ հաստատված ապրանքներով, հատկապես, եթե այն փակ է եղել:
 - Անհրաժեշտության դեպքում, երրորդ կողմ հանդիսացող մաքրող ընկերություններ ներգրավել մաքրման լայն աշխատանքներին օժանդակելու համար:
- ❑ Բոլոր տարածքները, ինչպիսիք են ճաշասենյակները, հյուրընկալի կանգնելու վայրը և խոհանոցները պետք է հագեցված լինեն համապատասխան սանիտարական միջոցներով, ներառյալ ձեռքի ախտահանիչ միջոցներ և ախտահանիչ անձեռոցիկներ բոլոր աշխատակիցների համար, որոնք անմիջականորեն սպասարկում են հաճախորդներին:
 - Ապահովեք մշտապես գործող և հագեցված սանհանգույցներ և անհրաժեշտության դեպքում տրամադրեք լրացուցիչ օճառ, թղթե սրբիչներ և ձեռքի ախտահանիչ միջոցներ:



- Առաջարկեք տեղադրել առանց հպման ձեռքի ախտահանիչ միջոց, օճառի և թղթե սրբիչների արկղեր:

- ☐ Ուտելիքի առաքման համար նախատեսված տարածքները հեռու պահել անցուղարձով հագեցված վայրերից: Հնարավորինս սահմանափակել մարդկանց միջև անմիջական շփումը իրենց ուտելիքը ստանալու ժամանակ:

ՄՆՆԴԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

- ☐ Պետք է հետևել և պահպանել սննդի անվտանգության բոլոր գործընթացները, որոնք նշված են Վալիֆոռնիայի մանրածախ սննդի օրենսգրքում (CRFC):
 - Տաք սնունդը տաք պահեք (135 °F կամ ավելի բարձր) և սառը սնունդը՝ սառը (41 °F կամ ցածր):
 - Մանրակրկիտ պատրաստեք սնունդը, ինչպես պահանջվում է CRFC-ում:
 - Մաքրեք և ախտահանեք սպասքն ու սարքավորումները CRFC-ում նշված պահանջվող հաճախականությամբ:
 - Հետևեք աշխատակիցների առողջությանն ու հիգիենային. աշխատանքի մի ներկայացեք եթե հիվանդ եք; հաճախակի լվացեք ձեռքերը; օգտագործեք ձեռնոցներ ինչպես պահանջվում է CRFC-ում:
 - Ապահովեք որ սնունդն ու սննդի բոլոր բաղադրիչները ձեռք բերվեն հաստատված սննդի աղբյուրից:
 - Մնունդ պատրաստող աշխատակիցներին իրենց հերթափոխերի ժամանակ չխրախուսել փոխելը, և կամ մտնելը մյուսների աշխատանքային կայանները:
- ☐ Ինքնասպասարկման մեքենաները, օրինակ՝ գազավորված հեղուկների կամ սառեցված յոգուրտի մեքենաները պետք է շահագործվեն միայն հաստատության աշխատակցի կողմից և անհրաժեշտ է որ հաճախակի ախտահանվեն:
- ☐ Փակել են այն տարածքները, որտեղ հաճախորդները կարող են հավաքվել, հպվել սննդին, և կամ նույն հաճախորդները կարող են օգտագործել սննդի պարագաները: Այդ պարագաները հաճախորդներին կտրվեն անհատապես և համապատասխան կերպով դեն կնետվեն, կամ էլ կմաքրվեն ու կախտահանվեն ամեն օգտագործումից հետո: Մա ներառում է, բայց չի սահմանափակում հետևյալները.
 - Ինքնասպասարկման տարածքներում տեղադրված համեմունքների և սպասքի զամբյուղները, անձեռոցիկները, կափարիչները, ձողիկները, սնունդը դուրս տանելու տարրաները, և այլն:
 - Ինքնասպասարկման տարածքները, օրինակ՝ սալսայի բարերը, սալատ-բարերը կամ բուֆետները, ներառյալ սննդի համտեսումը: :
 - Մեղանների մոտ սննդի պատրաստումն ու ներկայացումը, օրինակ՝ սննդամթերքներ ընտրելու սալակները, կոնվեյերների գոտիները, զվակամուլի պատրաստումը և այլն:
 - Հաճախորդների համար սննդից հետ մենթոլային կոնֆետները, նախուտեստները, ատամների փայտիկները կառաջարկվեն վճարման կետերում կամ էլ կտրվեն միայն ըստ պահանջի:
- ☐ Նշանակել հատուկ սննդի աշխատող և հանձնարարել նրան փաթաթել սպասքը (արծաթեղենը) մինչ հաճախորդին հանձնելը, այլ ոչ թե բազմաթիվ աշխատողներ գործ ունենան բաց սպասքի հետ մինչ հաճախորդի օգտագործելը:
- ☐ Մեղանի մոտ ընդհանուր տարաներից (օրինակ՝ կուժեր, շշեր) կրկին անգամ խմիչքներ լցնելը չի



թույլատրվում: Հաճախորդներին պետք է տրամադրել մաքուր ապակե սպասք՝ խմիչքները նորից լցնելու համար:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ

- Հանրության համար նախկինում հասանելի գույգարանները պետք է շարունակեն բաց մնալ նրանց համար:
- Յուրաքանչյուր հերթափոխում սննդի աշխատակից նշանակել անհրաժեշտության դեպքում վերահսկելու և իրականացնելու համար հավելյալ մաքրման և ախտահանման աշխատանքները:
- Մշակել և հետևել հաճախակի հպման մակերեսների և մուտքի տարածքների մաքրմանը և ախտահանման պլանին:
 - Ընդհանուր տարածքները և հաճախակի հպվող առարկաները հաճախորդների ստանալու և վճարման վայրերում (օրինակ՝ սեղաններ, դռան բռնակներ, կրեդիտ քարտերի ընթերցման սարքեր) աշխատանքային ժամերի ընթացքում ժամը մեկ անգամ պետք է ախտահանվեն EPA- ի կողմից հաստատված ախտահանիչ միջոցներով:
 - Վճարման համար օգտագործվող սարքերն ու գրիչները պետք է ախտահանվեն ամեն օգտագործելուց հետո:
- Հաստատությունը պետք է մանրագնին մաքրվի և ախտահանվի (COVID-19-ի դեմ հաստատված արդյունավետ նյութերով) ամեն օրվա վերջում: Հնարավորության դեպքում, մատյան պահել որտեղ կնշվեն կատարված աշխատանքները:
- Զրոյալատրել աշխատողների կողմից աուդիո ականջակալների և այլ սարքավորումների ընդհանուր օգտագործումը, բացառությամբ եթե ամեն օգտագործելուց հետո դրանք ինչպես հարկն է ախտահանվեն: Խորհրդակցեք սարքավորման արտադրողների հետ ախտահանման ճիշտ քայլերի և ձևերի համար:
- Ամանեղեն լվացողներին, ովքեր լվանում են բազմակի օգտագործման սպասք, վարակիչ ցայտյուններից աչքերը, քիթը և բերանը պաշտպանելու համար տրամադրեք միջոցներ, որոնք են կտորե դիմակի և պաշտպանիչ ակնոցների համադրությունը, կամ դեմքի վահանները: Ամանեղեն լվացողներին տրամադրել անջրաթափանց գոգնոցներ և պահանջել դրանք փոխել հաճախակի: Բազմակի օգտագործման պաշտպանիչ միջոցները, օրինակ՝ դեմքի վահանները և ակնոցները օգտագործման ընթացքում հաճախակի մանրակրկիտ ախտահանել:
- Սանհանգույցները կանոնավոր կերպով ստուգվում, մաքրվում և ախտահանվում են ժամը մեկ անգամ օգտագործելով EPA կողմից հաստատված ախտահանող միջոցներ:
- Հանրությանը տրամադրվող ձեռքի ախտահանիչ միջոցները և աղբի տարաները տեղադրված են հաստատության մուտքի մոտ:

ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ/ ՃԱՇԵԼՈՒ ԲԱՅՕԹՅԱ ՏԱՐԱԾՔՆԵՐ

- Հաճախորդները պետք է մտնեն բաց դռների միջով (սա կգնահատվի հաստատման համար՝ կապված միջատների ընդհանուր ներս թափանցելու հետ) կամ հնարավորության դեպքում՝ ավտոմատ բացվող: Ձեռքի ախտահանիչ միջոց պետք է տրամադրել այն հյուրերին, որոնք պետք է հավեն դռների բռնակներին:
- Հաճախորդներին հրահանգված է, որպեսզի նրանք կտորե դիմակներ կրեն այն ժամանակ, երբ չեն ուտում կամ խմում. սա ներառում է հաստատություն մուտք գործելիս, հաստատության ներսում ցանկացած վայրում շրջելիս և սանհանգույցից օգտվելիս: Մա վերաբերվում է բոլոր չափահասներին և 2 տարեկանից բարձր երեխաներին: Բացառություն են կազմում քրոնիկական



Հնչառական հիվանդություն կամ այլ հիվանդություններ ունեցող անձիք, որոնց համար կտորե դիմակ կրելը վտանգավոր է: **Ձեր աշխատակիցների և այլ այցելուների անվտանգությանն աջակցելու նպատակով՝ հարկավոր է դեմքի ծածկոցներ տրամադրել այն այցելուներին, ովքեր գալիս են առանց դրանց:**

- Հաճախորդները կարող են հանել կտորե դիմակները սեղանի շուրջ նստած ժամանակ, ուտելիս և խմելիս:
- Կարող եք հրաժարվել սպասարկել և պահանջել հեռանալ այն հաճախորդներին, որոնք կհրաժարվեն կտորե դիմակ կրել:
- ❑ Հաճախորդները, որոնք գալիս են իրենց երեխաների հետ պետք է ապահովեն, որ երեխաները ծնողների կողքին մնան, խուսափեն այլ մարդկանցից կամ այլ իրերի հետ հպվելուց, որը իրենց չի պատկանում և եթե տարիքը թույլ է տալիս՝ կտորե դիմակ կրեն:
- ❑ Իրականացվում է այցելուների ստուգումներ՝ նախքան այցելուներին կթույլատրվի աշխատավայր մտնել: Ստուգումները պետք է ներառեն հազի, շնչարգելության, դժվարացած շնչառության, ջերմության կամ դողերոցի դիտարկում: Այս ստուգումները կարող են կատարվել հեռավար անհատապես կամ այլընտրանքային եղանակներով, օրինակ՝ ստուգման առցանց համակարգերով կամ հաստատության մուտքի մոտ փակցված նշաններով, որոնք տեղեկացնում են, որ նման ախտանիշներով այցելուները չպետք է տարածք մտնեն:
- ❑ Մատուցողները և սեղանները մաքրողները հաճախորդների կողմից օգտագործված իրերը (կեղտոտ բաժակներ, ափսեներ, անձեռոցիկներ և այլն) հավաքելու և տեղափոխելու ընթացքում կամ աղբի հետ գործ ունեցողները պետք է կրեն մեկանգամյա օգտագործման ձեռնոցներ (ձեռքերը լվացեք ձեռնոցները դնելուց առաջ և դրանք հանելուց հետո) և գոգնոցներ, որոնք նրանք պետք է հաճախակի փոխեն:
- ❑ Բազմակի օգտագործման ճաշացուցակները մաքրվում և ախտահանվում են հաճախորդի կողմից օգտագործվելուց հետո: Եթե թղթե ճաշացուցակ եք կիրառում, ապա դրանք դեն նետեք հաճախորդի օգտագործելուց հետո: Կարելի է կիրառել ճաշի ընտրության այլ տարբերակներ, ինչպիսիք են՝ ճաշացանքի տախտակները, էլեկտրոնային ճաշացուցակները, կամ բջջային հեռախոսների մեջ ներբեռնված ճաշացուցակները:
- ❑ Հաճախորդների բացօթյա նստելու տարածքները մաքրվում և ախտահանվում են ամեն օգտագործումից հետո: Աթոռները և սեղանները պետք է մաքրվեն և ախտահանվեն ամեն հաճախորդից հետո, իսկ սեղանի վրայի այլ իրերը պետք է մեկանգամյա օգտագործման համար լինեն: Յուրաքանչյուր սեղանի սփռոցը փոխել օգտագործելուց հետո, իսկ պինդ անձակոտկեն մակերեսով սեղանները մաքրել և ախտահանել ամեն հաճախորդից հետո:
- ❑ Մինչ հաճախորդների նստելը, սեղանների վրա չպետք է լինեն ամանեղեն, ճաշացուցակ, համեմունքներ կամ այլ պարագաներ: Նման բոլոր իրերը ամբողջովին ախտահանվում են հաճախորդների կողմից օգտագործվելուց հետո և պահվում այնպիսի վայրում որը թույլ չի տալիս հնարավոր աղտոտում :
- ❑ Դուրս տանելու տարաների մեջ սնունդը կարող է դրվել միայն հաճախորդների կողմից և տարաները տրամադրվում են միայն ըստ պահանջի:
- ❑ Խրախուսվում են անկանխիկ գործարքները: Եթե հնարավոր է, սննդի հաստատությունում հաճախորդներին թույլ է տրվում ինքնուրույն իրականացնել իրենց դեբիտ/կրեդիտ քարտերով վճարումները, և քարտերը կարդացող սարքերը ամեն հաճախորդի օգտագործումից հետո ախտահանվում են:
- ❑ Լրացուցիչ (ընտրովի) — նկարագրեք այլ միջոցառումներ. (տարեցների ժամեր սահմանելը, ոչ-պիկ



Ժամերի վաճառքի խթանում)

D. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Այս արձանագրության պատճեն փակցված է հաստատության բոլոր հանրային մուտքերի մոտ:
- Այն նշանը, որը հաճախորդներին կտեղեկացնի, որ պահանջվում է ձեռքերի ախտահանիչ միջոց օգտագործել և կտորե դիմակ կրել, երբ չեն ուտում կամ խմում, նույնպես փակցված է բոլոր մուտքերի մոտ:
- Նշանները փակցված են, որոնք հաճախորդներին կհիշեցնեն հնարավորության դեպքում 6 ոտնաչափ սոցիալական հեռավորություն պահպանել, ձեռքերը լվանալ կամ ախտահանիչ միջոց օգտագործել մինչև ռեստորան մտնելը, տանը մնալ եթե հիվանդ են, կամ COVID-19-ի հետ համընկնող ախտանիշեր ունեն:
- Նշանները փակցված են, որոնք հաճախորդներին կտեղեկացնեն, որ ընդունված սովորության համաձայն ուտելուց հետո շփվելը չի խրախուսվում համավարակի ժամանակ:

Հաստատության առցանց վաճառքի պորտալները (վեբ կայք, սոցիալական լրատվամիջոց և այլն) հստակ տեղեկատվություններ են տրամադրում հաստատության ժամերի, կտորե դիմակների օգտագործման անհրաժեշտության, վերաբացման արձանագրության, ուտելիքը նախապես պատվիրելու, ամրագրման, պատվերի համար նախապես վճարելու, վերցնելու կամ առաքման, և այլ նմանատիպ հարցերի վերաբերյալ:

E. ԽԻՍՏ ԿԱՐԵՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԱՉԱՌ ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Առաջնահերթություն է տրվել հաճախորդների/պատվիրատուների համար կարևորագույն ծառայություններին :
- Այն գործարքները կամ ծառայությունները, որոնք կարող են հեռակա կարգով առաջարկվել, արվում են առցանց:
- Ձեռնարկվում են միջոցառումներ՝ ապրանքների և ծառայությունների հասանելիություն ապահովելու այն հաճախորդների համար, որոնք ունեն տեղաշարժման սահմանափակ հնարավորություն և/կամ հանրային տարածքներում գտնվում են բարձր ռիսկի տակ:

Ցանկացած լրացուցիչ միջոցառումներ, որոնք չեն ներառված այստեղ, կարող են նշվել առանձին էջի վրա, և հաստատությունը պետք է կցի այս փաստաթղթին

Այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցերի դեպքում, դուք կարող եք դիմել հետևյալ անձին.

**Հաստատության
տնօրենի/մենեջրի անունը**

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ ՇՐՋԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԸ



Հեռախոսահամարը _____

Արձանագրության վերջին
թարմացման ամսաթիվը _____